ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ԱՎԵԼԻ ՇԱՏ ԲՆԱԿԵԼԻՆԵՐ

ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացումը արագացնելու վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի հայտնի որոշման կատարումն ապահովելու նպատակով անցած տարվա հոկտեմբերին Ստեփանակերտում բացվեց «Արարատարդշին» տրեստի № 83 շինվարչությունը: Վարչությունում ընդգրկված են մոտ 300 շինարարներ, որոնք անհրաժեշտ պատրաստականություն ունեն մեծածավալ աշխատանքներ կատարելու համար: Սակայն մարզի ներկա վիճակը, մասնավորապես շրջափակումը, վարչությանը հնարավորություն չի տալիս սկսած կառույցների աշխատանքները ավարտին հասցնելու: Վարչության շինարարները երբեմն չդադարեցրին աշխատանքները: Նրանք շատ լավ էին գիտակցում, որ Արցախ տեղափոխված 25—30 հազար գաղթականներին բնակարաններ են պետք: Այո՛, արցախյան հողում ամրապնդվելու համար հային նախ բնակարան է պետք: Դա է հարցերի հարցը, ամենակարևորը, ամենահիմնականը: Ամեն բնակարան շահագործման հանձնելով, նրանք հաստատում են հայի հիմնական տեղը Արցախում:

Դործադուլները առանց անցանկալի հետևանքների չանցան: Զորս ամիս մարզում չէր աշխատում № 9 շինտրեստը և քաղաքի ոչ մի շինվարչություն: Չկառուցվեց 20 հազար քմ բնակտարածություն, այսինքն՝ բնակարան չստացավ մոտ 2500 մարդ: Բնակարան, ապրուստի պայմաններ ու աշխատանք չունենալու պատճառով Ստեփանակերտից երկրի ուրիշ քաղաքներ տեղափոխվեցին 5 հազար գաղթականներ: «Արարատարդշինի» № 83 վարչությունն աշխատեց անարդյունք: Շինկազմակերպությունը չկարողացավ շահագործման հանձնել շինարարական օբյեկտներից և ոչ մեկը: Ինը հարկանի երկու բնակելի շենքերը ժամանակին շահագործման չհանձնվեցին, որովհետև չապահովեցին շինարարական կոլեկտիվի համաչափ ու նորմալ աշխատանքը: Եվ դա՝ այն պատճառով, որ խախտված էր քաղաքի մատակարարումը շինարարական կազմակերպությունների համագործակցությունը: Անցած տարվա դարաբաղյան շարժման իրադարձությունները, ռեգիոնի գերլարվածությունը, անավարտ երկաթուղին և, վերջապես, երկարատև գործադուլները խիստ բացասաբար անդրադարձան վարչության գործունեության վրա: Վարչության շինանյութերի արտադրամասը չեռուցում է ստանում գյուղմեքենաշինության գործարանից, իսկ գործարանը չորս ամիս գործադուլի մեջ էր: Այդ իսկ պատճառով շինանյութերի արտադրամասը զրկված էր օրական 600 քմ միջնորմային սալիկներ և 2500—3000 քարի բլոկներ պատրաստելու հնարավորությունից: Շինարարները անկախ իրենց կամքից մատնվել էին պարապուրդի: Մինչդեռ եթե ընդամենը 3 հնգապատ աշխատանքի գործարանի կաթսայատանը և շինարարության արտադրամասին չեռուցում մատուցեին, չէր լինի հարկադիր պարապուրդը: Սա գործին օգուտ կբերեր: Իսկ Ստեփանակերտի հարևանությամբ՝ Նուշիում, Մայիսկում, Խոջալուում... օր ու գիշեր կառուցում են ու կառուցում:

Մարզի շրջափակման մեջ գտնվելու պատճառով շինվարչությունը չի ստանում անհրաժեշտ տեխնիկա, մեխանիզմ, փաստորեն տապալված էր շինանյութերի մատակարարումը: Վարչությունը 7 ամսվա համար նախատեսված 7 միլիոն 100 հազարի դիմաց կատարել է ընդամենը մեկ միլիոն 800 հազար ռուբլու շինմոնտաժային աշխատանքներ:

Վարչությունը տեղական ռեսուրսների միջոցով ի վիճակի էր կատարել մի շարք պատվերներ: Սակայն գործադուլի օրերին պատվիրատու կազմակերպությունները հնարավորություն չունեցան օժանդակելու և ապահովելու վարչությանը: Այժմ այդ աշխատանքները նորմալացված են, կոլեկտիվը պատավորվել է իրեն հատկացված տարեկան պլանի կատարողականը մնացած 4 ամսվա ընթացքում հասցնել 60 տոկոսի, տարվա չորրորդ եռամսյակում շահագործման հանձնել իր հարկանի երկու բնակելի շենք, ինչպես նաև 20 տոնանոցատուն քաղաքի Հայկական թաղամասում: Շինարարական աշխատանքները նոր թափ են առել Ստեփանակերտի սպորտհամալիրում, Զարենցի անվան № 7 դպրոցի կից մասնաշենքում, կոնդենսատորների գործարանի Հաթերքի մասնաճյուղում: Մարտակերտում և Ասկերանում կառուցում են նոր, հարմարավետ ծննդատներ, Ասկերանում՝ անասնակերերի պատրաստման կոմբինատ: Այստեղ կառուցվում են նաև բազմահարկ երկու բնակշենք, վարչության սեփական բազայի վարչական շենքը, այլ օբյեկտներ:

Վարչությունը ձեռնամուխ է եղել մոտ ապագայում սկսել ու Ստեփանակերտի ծննդատան, Ասկերանի և Հասանաբադի շինանյութերի կոմբինատի, մեծածախ առևտրի ԼՂԻՄ-ի միավորման բազայի, պանելային երկու բազմահարկ շենքերի և մի շարք այլ օբյեկտների շինարարությունը:

«Արարատարդշին» տրեստի Ստեփանակերտի № 83 շինվարչությունը շինարարական հզորությունը զարգացնելու լայն հեռանկարներ ունի: 1990 թվականին նրա շինմոնտաժային աշխատանքների ծավալը կնասնի 26 միլիոն ռուբլու, կամբագնդվի վարչության տեխնիկական բազան, կբարելավվի շինանյութերի մատակարարման գործը: Շատ շինարարական կազմակերպությունների ղեկավարներ հաճախ են դժգոհում, որ շինանյութեր չկան. Բաքուն քար, ցեմենտ, շինափայտ չի տալիս: Թո՛ղ չտա: Մեր պապերը Արցախում ինչպե՞ս են տներ կառուցել: Ամենալավ շինքարը մեր Արցախում է, մեր կիր-ավազը չի գիջում ցեմենտին, մեր անտառները հարուստ են շինափայտով: Պետք է սովորել օգտագործել տեղական ռեսուրսները: № 83 շինվարչությունը որոշել է ձեռնամուխ լինել տեղական շինանյութերի օգտագործմանը: Այո՛, Արցախ աշխարհը շատ հարուստ է շինանյութերով: Չէ՞ որ Արցախի գյուղերն ու քաղաքները, որոնք դարեր շարունակ կանգուն են, գեղեցիկ և ամուր, կառուցվել են տեղական շինանյութերով:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)
Ստեփանակերտ